ՊԱՏԻՎ ՈՒՂԵՄ

ՀԻՄՆԱՎՈՐ ԳԻՏԵԼԻՔՈՎ ԴԵՊԻ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Թիվ 1(32), 29 հունվարի, 2021թ.

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՆՈՐ ՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԱՎԱՐՆԵՐՆ ՍՏԱՑԱՆ ԻՐԵՆՑ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԸ

Հունվարի 15-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիրի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ոստիկանության հիմնական տակտիկական պատրաստականության վերաբերյալ «Վերապատրաստում վերապատրաստողների համար» (ToT) դասընթացի մասնակիցների հավաստագրերի հանձնման հանդիսավոր արարողությունը:

Դասընթացը կազմակերպվել էր ԻՍԻԹԱՓ (Միջազգային քրեական հետախուզության ուսումնական օժանդակման ծրագիր) առաքելության, ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ ոստիկանության կրթահամալիրի նախաձեռնությամբ: Դեկտեմբերի 1-ից մինչև հունվարի 15-ը տևած դասընթացը վարում էին ԱՄՆ Տեխաս նահանգի և Վրաստանի Հանրապետության փորձառու պարեկային ոստիկանները, որոնք այս ընթացքում իրենց փորձն են փոխանցել ՀՀ ոստիկանությունում նոր կազմավորվող պարեկային ծառայությունում պաշտոնի նշանակման նպատակով անցկացվող դասընթացի ապագա դասընթացավար-հրահանգիչներին:

Հավաստագրերի հանձնման արարողության մեկնարկին ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Մ.Բաբայանը շնորհակալություն հայտնեց դասախոսներին ու մասնակիցներին՝ նշելով, որ դասընթացը բարձր որակավորման չափանիշներով և ՀՀ-ում իր ձևաչափով եզակի է, իսկ մասնակիցները, փաստորեն, ՀՀ-ում առաջինն են, որ կունենան նման հավաստագիր: Ծրագրի հաջող իրականացման համար Մ.Բաբայանն առանձնակի շնորհակալություն հայտնեց ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան, ՀՀ արդարադատության նախարարության աշխատակիցներին և ԱՄՆ-ից ու Վրաստանի Հանրապետությունից ժամանած մասնագետներին:

ՀՀ արդարադատության նախարարության միջազգային իրավական համագործակցության համակարգող, խորհրդական Ամալյա Հովսեփյանն էլ շնորհակալություն հայտնեց դասընթացի բոլոր կազմակերպիչներին և դասախոսներին: Նա ընդգծեց նոր ստեղծվող պարեկային ոստիկանության դերն ու կարևորությունը բարեփոխումների շրջանակներում:

ԻՍԻԹԱՓ (Միջազգային քրեական հետախուզության վերաբերյալ ուսումնական օժանդակման ծրագիր) առաքելության խորհրդատու Թիմ Դոնոհեն էլ իր հերթին շնորհակալություն հայտնեց դասախոսներին ու մասնակից դասընթացավարներին (հրահանգիչներին). «Ես կարծում եմ, որ սա դասավանդման այլ մեթոդաբանություն է պահանջում: Վստահ եմ, որ այս դասընթացում ընդգրկված մասնակիցները կցուցաբերեն իրենց ակտիվությունն ու նախաձեռնողականությունը»:

Միջոցառումն ավարտվեց հավաստագրերի հանդիսավոր հանձնմամբ:

ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ

Վերջերս ՀՀ ոստիկանության կրթահամալիրում լույս են ընծայվել սահմանադրական իրավունքի, քրեական դատավարության, քրեական իրավունքի, ոստիկանության հատուկ տակտիկական պատրաստականության ոլորտներում մի շարք գիտական աշխատություններ, որոնք կծառայեն Կրթահամալիրի պրոֆեսորադասախոսական կազմի և սովորողների մասնագիտական կատարելագործմանը.

Քրեական իրավունքի ոլորտում՝ քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի պետ, ի.գ.թ., ոստիկանության փոխգնդապետ Հ. Խաչատրյանի հեղինակային «ՀՀ-ում անչափահասների խմբային հանցավորություն» վերտառությամբ մենագրությունը և «Կրիմինալոգիական հասկացություններ (եզրույթներ)» վերտառությամբ ուսումնատեղեկատվական ձեռնարկը:

«ՀՀ-ում անչափահասների խմբային հանցավորություն» մենագրությունն առաջին համալիր և ամբողջական ուսումնասիրությունն է, որում քննարկվում է անչափահասների հանցավորության հակազդման հիմնախնդիրներից մեկը՝ անչափահասների խմբային հանցավոր գործունեությունը:

Աշխատությունում ուսումնասիրվում և քննարկվում է անչափահասների խմբային հանցավորության հասկացությունը, առանձնահատկությունները, վիճակը, շարժընթացը, կառուցվածքը, զարգացման միտումները, անչափահասների հանցավոր խմբերի տիպերը, խմբի կազմում հանցանք կատարած անչափահասի բնութագրիչ առանձնահատկությունները, անչափահասների խմբային հանցավորության պատճառներն ու պայմանները, կանխարգելման հնարավորություններն ու միջոցները:

«Կրիմինալոգիական հասկացություններ (եզրույթներ)» ձեռնարկը նախատեսված է «Կրիմինալոգիա» դասընթացի դասավանդման համար:

Ձեռնարկը կարող է օգտակար լինել «Կրիմինալոգիա» առարկան դասավանդողների, ուսանողների, դատական և իրավապահ մարմինների աշխատողների, փաստաբանների, կրիմինալոգիայի հիմնախնդիրներով զբաղվող գիտաշխատողների, ինչպես նաև հանցավորության կանխարգելման հարցերով հետաքրքրվող անձանց համար:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քրեական դատավարության ամբիոնի դոցենտ, ոստիկանության փոխգնդապետ Հասմիկ Սմբատյանի՝ «Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք (ընդհանուր մաս)» ուսումնագործնական ձեռնարկը, ինչպես նաև ակադեմիայի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի ավագ դասախոս, ի.գ.թ., ոստիկանության մայոր Լալա Գրիգորյանի հեղինակած՝ «Հանցագործության միջնորդավորված կատարման համար քրեական պատասխանատվության տեսական և գործնական հիմնախնդիրները» վերտառությամբ մենագրությունը,

Սահմանադրական իրավունքի ոլորտում՝ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության ամբիոնի դասախոս, ոստիկանության կապիտան Աննա Ադամյանի հեղինակած՝ «Իրավակարգի ապահովման ոլորտում ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության սահմանադրաիրավական հիմքերը» («Конституционно-правовые основы деятельности органов местного самоуправления в сфере обеспечения правопорядка в Республике Армения») թեմայով մենագրությունը,

Հատուկ տակտիկական պատրաստականության ոլորտում՝ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քոլեջի տակտիկական պատրաստականության ամբիոնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Գոռ Մուրադյանի՝ «9մմ «Մակարով» ատրճանակ» ուսումնամեթոդական ձեռնարկը և նույն ամբիոնի դոցենտ, ոստիկանության փոխգնդապետ Վահագն Ֆրանկյանի՝ «Ոստիկանության սպառազինության մեջ ընդգրկված հատուկ միջոցառումների իրականացման հատուկ միջոցների կիրառման կարգը» ուսումնադիդակտիկ հրատարակությունը,

Քրեական դատավարության ոլորտում՝ ՀՀ սահմանադրական դատարանի աշխատակազմի փորձագիտական-վերլուծական ծառայության գլխավոր մասնագետ Արտակ Ղազարյանի՝ «Ժողովրդական մեղադրանքը (actio popularis) և դրա ներդրման հեռանկարները հայկական քրեական դատավարությունում» վերտառությամբ մենագրությունը:

Շնորհավորում ենք աշխատությունների հեղինակներին՝ մաղթելով գիտական նոր ձեռքբերումներ:

ԱՅՍ ՏԱՐՎԱ ԱՆԴՐԱՆԻԿ ՆԻՍՏԸ

Այսյն թվականի հունվարի 13-ին տեղի ունեցավ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական խորհրդի 2021 թվականի 1-ին նիստը: Օրակարգի հարցի քննարկման արդյունքում գիտական խորհուրդը որոշեց փոփոխություններ և լրացումներ կատարել ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական խորհրդի 11.02.2015 թիվ 2 նիստում հաստատված՝ «ՀՀ ոստիկանության կրթահամալիրից սովորողների ազատման, ուսումնառության ընդհատման, վերականգնման և տեղափոխման կարգ»-ում և ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական խորհրդի 01.10.2019 թիվ 10 նիստում հաստատված՝ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պայմանագրային հիմունքներով դասախոսների վարձատրության չափերը սահմանելու մասին որոշման մեջ, ինչպես նաև սահմանեց «Ոստիկանական գործ» մասնագիտության «պարեկ» որակավորմամբ նախնական մասնագիտական կրթական ծրագրով ուսուցմանը և դրան համապատասխան լրացուցիչ կրթական ծրագրով վերապատրաստմանը որպես դասախոս ներգրավված՝ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պրոֆեսորադասախոսական անձնակազմի համար ամենամսյա հավելավճար:

ԻՐԱՎԱԳԵՏ ՄԱԳԻՍՏՐՈՍՆԵՐՆ ՍՏԱՑԱՆ ԻՐԵՆՑ ԴԻՊԼՈՄՆԵՐԸ

Դեկտեմբերի 30-ին կայացավ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի մագիստրատուրայի հեռակա ուսուցման 2020-2021 ուսումնական տարվա շրջանավարտների դիպլոմների հանձնման արարողությունը:

19 շրջանավարտներից 5-ն արժանացան գերազանցության դիպլոմի:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Մ. Բաբայանը, օգտվելով առիթից, շնորհավորեց բոլորի գալիք Ամանորն ու Սուրբ ծնունդը՝ մաղթելով, որ նորընծա մագիստրոսները լիարժեք կերպով ներդնեն ստացած գիտելիքներն իրենց աշխատանքում, լինեն պատվախնդիր ու բարեխիղճ մասնագետներ: Մ.Բաբայանը նաև հույս հայտնեց, որ գալիք տարվա ընթացքում մագիստրոս իրավաբաններն արժանապատվորեն կծառայեցնեն իրենց գիտելիքները՝ ի նպաստ հայրենիքի հզորացմանն ու խաղաղությանը:

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Դեկտեմբերի 23-ին անցկացվեց ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի մագիստրատուրայի հեռակա ուսուցման 2020-2021 ուսումնական տարվա շրջանավարտների ամփոփիչ ատեստավորումը և նախորդ ուստարվա մեկ շրջանավարտի վերաատեստավորումը: Ատեստավորման հանձնաժողովի նախագահն էր ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Ա.Ֆիդանյանը:

Մագիստրոսական թեզերի պաշտպանությանը մասնակցում էր 19 շրջանավարտ, որոնցից 5-ն արժանացան գերազանցության դիպլոմի:

Շնորհավորում ենք իրավագիտության նորընծա մագիստրոսներին՝ մաղթելով գիտական և մասնագիտական նորանոր վերելքներ:

ՈՎ ՔՆԱՁ Է, ԱՐԹՈՒՆ ԿԱՑԵՔ

Երկար ու ձիգ տարիներ սուրբ մասունքի պես խնամքով պահում ու պահպանում էի Գրիգոր պապիս մասին պատմող բոլոր թերթերը և ամեն անգամ պատահական ձեռքս ընկնելիս մի ներքին հպարտություն էի զգում: Երբեք չեմ փորձել նվիրյալ պապիս մասին որևէ բան գրել, իմ սերնդակիցներին ներկայացնել նրա ապրած կյանքի հերոսական դրվագները, մինչդեռ նրա մասին պատմող էջերը տարեցտարի դեղնում էին ու խունանում: Հետաքրքիր է, որ ամեն անգամ նույն խանդավառությամբ ու ներքին հպարտությամբ էի ընթերցում պապիս քաջագործությունները և մտովի ուզում էի հասկանալ, թե պապիս շառավիղներից ո՞վ է գեներով ավելի շատ նման նրան, բայց չէի հասկանում, որ հատկապես որոշակի էքստրեմալ իրավիճակներում է բացահայտվում բնավորության այս կամ այն գիծը կամ գենին բնորոշ հատկությունը...

1917-21 թվականներին նրա անունը ահ ու սարսափի մեջ էր պահում բոլոր թուրք ելուզակներին, որոնք հարձակվում էին հայկական գյուղերի վրա, գողանում, թալանում, առևանգում և սպանում: Հենց այնտեղ ու ամենուր էր նրա անունը: Բավական էր, որ մեկը սուտ գոռար, թե՝ հասի՛ր, Թաթօղլի՜ (նրան այդ անունով էին ճանաչում թուրքերը), թուրքերը թողնում ու լեղապատառ փախչում էին:

Թաթօղլին (Թաթի որդի) քաջազուն հայորդի էր՝ ծնված դաշտային Արցախի Բանանց հայաբնակ գյուղում: Անվախ երիտասարդը մեն-մենակ դուրս էր գալիս 3-4 թուրքի դեմ ու հաղթում: Որտեղ մի թուրք էր սպանվում, ահաբեկված թշնամին ասում էր՝ Թաթօղլու ձեռքի գործն է:

Տաճկաստանի պատերազմում 3-4 տարի կռվելը նրա համար ռազմական մեծ դպրոց էր եղել: Այնտեղ էր նա ստացել մարտական առաջին մկրտությունը և սխրանքների համար արժանացել Գեորգևյան 4 խաչերի:

Գրիգորն այնքան էր հմտացել ռազմական գործի մեջ, ճաշակել ռազմի դաշտի բոլոր տառապանքները, որ ոչ մի տեսակի դժվարություններից չվախեցող դյուցազունը, որքան էլ թշնամին բազմամարդ լիներ, լավ ամրացած ու դիրքավորված, փոքրաթիվ հայերի գլուխն անցած, անակնկալ հարվածում էր և անխնա սրի քաշում նրանց, իսկ կենդանի մնացածները խուճապահար դիմում էին փախուստի:

Օրհասական պահերին նրա մի ոտքը Հայաստանում էր, մյուսը՝ Արցախում:

...Պապս բախտ ունեցավ սերունդ թողնելու, երկար ապրելու:

Հաճախ էր պատահում, որ խորհրդային տարիներին շրջակա գյուղերի բնակիչները, նրան չճանաչելով, պատմեին քաջ Թաթօղլու հերոսությունները, իսկ պապս լսում էր ու քթի տակ մեղմ ժպտում:

Հայրենական մեծ պատերազմը նոր էր ավարտվել: Գրիգոր պապս հիվանդ պառկած էր Դաշքեսանի հիվանդանոցում: Ադրբեջանցի բժիշկը, իմանալով, որ իր հիվանդը լեգենդար Թաթօղլին է, կես լուրջ, կես կատակ ասում է, թե ինքը Մոսկվայից բերած լավ դեղերով կբուժի նրան, եթե վերջինս ասի, թե իր կյանքում քանի թուրք է սպանել:

-Եթե իմանայի, որ իմ կյանքի վերջում պետք է որևէ մեկին հաշիվ տամ, հետս հաշվապահ ման կտայի,- առանց վարանելու պատասխանում է Գրիգոր պապս:

Պա՛պ ջան, իմ հերո՛ս Թաթօղլի պապիկ, փոխվել են ժամանակները, փոխվել է աշխարհը, սակայն այս քաղաքակիրթ աշխարհում քո թշնամին, իմ թշնամին, մեր թշնամին նույնն է մնացել, մնացել է նույն բարբարոսն ու արնախումը, նույն վայրագն ու հրոսակը: Սակայն իմացի՛ր, Գրիգո՛ր պապիկ, այսօր էլ շատ քաջասիրտ հայորդիներ Անդրանիկի, Աղբյուր Սերոբի, Արաբոյի և քո օրինակով ելել են պաշտպանելու հող հայրենին: Նրանք կենաց ու մահու կռիվ են տալիս, որ անիրավ թուրքերը չպղծեն մեր մանկության արահետները, մեր շեներն ու սրբավայրերը: Ցավոք, ահեղ մարտերից մեկում բազում հայորդիների հետ նահատակվեց նաև քո արժանի ծոռը՝ Աղասարյան Յուրան...

Հավերժ փա՛ռք մեր հերոս տղաներին:

Այո՛, հզոր է հայի գենը, և մեր էպոսի հորեղբայր Օհանի ձայնն է այն, որ ծակել է տալիս հազար գոմշի կաշի և հազար ջաղացքար:

Դե՛, ուրեմն՝ ՈՎ ՔՆԱՁ Է, ԱՐԹՈՒՆ ԿԱՑԵՔ...

Կարինե Բաղդասարյան
ավագ ենթասպա

ԱՐՀԱՎԻՐՔՆԵՐՈՎ ԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ

Սերնդափոխությունը բարդ և բազմաշերտ ընթացքներով է հարուստ. նորերն ավելի հեշտ են հարմարվում կյանքի արագահոս ընթացքին, հները հարուստ են իրենց կենսափորձով, կյանքի դժվարություններին դիմակայելու իրենց ճկունությամբ, զսպվածությամբ, նորերի սխալները ներելու կարողությամբ, նրանց ճիշտ ուղի ցույց տալու համբերատարությամբ: Գալիք սերնդի մեջ ցանկանում ենք մեր երազածը տեսնել, որի իրագործման ճանապարհին ինքներս մեզ մշտապես վերափոխում և վերակառուցում ենք: 2020 թվականն իր հետ բերեց կորոնավիրուսային համավարակը, որի արդյունքում կյանքը խաթարվեց. կարծես Աստված յուրաքանչյուրիս ժամանակ տվեց իսկական արժեքները վերագնահատելու:

Գարնանային խաթարված ուսումնական կիսամյակից հետո պատանիները սրտի թրթիռով և նախապատրաստական ոգևորությամբ էին սպասում այս ուսումնական տարվան, ասել է թե՝ կարոտել էին իրենց կրթօջախին: Սա, թերևս, ամենասպասված, պատմական դարձած ուսումնական կիսամյակը պիտի լիներ: Բոլորս հոգու խորքում կարծում էինք, որ այս չարաբաստիկ համավարակը աշնան գալու հետ կվերջանա, կանցնի, անհետ կհեռանա, բայց եկավ ամենածանր արհավիրքը՝ ներկված պատերազմի գույնով: Միախառնվեցին համաճարակն ու պատերազմը: Բայց, ոչի՛նչ, դա էլ կհաղթահարենք, ոտքի կկանգնենք: Ագահության մոլուցքով, հիվանդ երևակայությամբ թշնամու՝ մեզ ոչնչացնելու երազանքը չի իրագործվելու:

2020 թվականի սեպտեմբերի 27-ի լուսացաբին նենգ թշնամին հերթական անգամ իր ագրեսիվ և ոճրագործ ախորժակով հարձակվեց Արցախ աշխարհի վրա:

Հայ ազգը հատկապես համախմբվում է օրհասական պահին, և այս անգամ էլ բացառություն չեղավ... Մի կողմից պայքարում էինք համաճարակի, իսկ մյուս կողմից՝ պատերազմի բերած սարսափելի հետևանքների դեմ, որի արդյունքում մեզանից կամքի ուժ, կորով և անսահման նվիրվածություն էր պահանջվում, ապրելու և կրկին արարելու տենչն էր ակնկալվում: Այդ օրերին կյանքի-մահու կռիվ էր գնում, սահմանին կանգնած ամեն հայորդի հերոսաբար պաշտպանում էր մեր հայրենի հողը: Նրանք հայրական խրատով են պաշտել հայրենիքը, իրենց ուսուցիչն է ուսուցանել հայրենասիրություն: Հայ մայրերից են ծնվում առյուծ զավակներ, և մայրական կաթով են փոխանցվում արիությունը, խիզախումի ոգին և հայրենասիրությունը, ուստի նրանք վճռական պահերին պատրաստ են պաշտպանելու ամենաթանկը՝ հայրենիքը, ընտանիքը, սերը:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրում սովորում են իսկապես լավագույնները: Սա խիզախների կրթօջախ է:

Կիսամյակը դեռ նոր էր սկսել, դասապրոցեսը նոր էր հարմարեցվել համավարակի թելադրած պահանջներին, երբ հնչեց պատերազմի բոթը: Կրթահամալիրի վճարովի ուսուցման սովորողներն առանց վարանելու համալրեցին հայրենիքի անձնուրաց պաշտպանների շարքը: Սակայն սա աննախադեպ պատերազմ էր: Եվ մենք ունեցանք շատ կորուստներ, հերոսացած տղաների թափված արյուն, սուրբ հողի համար մարտնչող խաղաղատենչ բնակչություն, իրենց հայրենիքում ապրելու արդար պահանջով կռվի ելած ահել-ջահել, կենդանության օրոք հերոսի փառքի արժանացած տղաներ, հետմահու հերոսացված նահատակներ, վիրավորված և ցավերի մեջ տառապող մանկահասակ երեխաներ, սեփական տան ավերված մոխրակույտը տեսնող ծերունու աչքեր, արհավիրքի և ստորգետնյա ապաստարանների մեջ ապրող մազապուրծ ընտանիքներ:

Այս պատերազմը խելքի, մտքի ու բազկի պատերազմ չէր. երկնքից արկերի կարկուտ էր թափվում. ու դժբախտության կարկուտը թափվեց հայ մայրերի գլխին, երեխաներ որբացան, դեռ ոտքը չդրած կյանքի մեծ ճանապարհին՝ կյանքին հրաժեշտ տվեցին 18-19 տարեկան հազարավոր պատանիներ: Բայց ժամանակը և օրվա հրամայականը պարտադրեց մեզ չընկճվել, չթուլանալ. վրեժ ունենք լուծելու...

Կոմիտասյան «Կռունկ» միշտ է հնչելու, քանի որ հայկական եկեղեցին ավերելով՝ հայի հավատքն ու հույսը չեն կարող քանդել: Հայ ազգը եղել է և հավերժ կմնա: Աստված սրբելու է մեր արցունքները, մեր սրտի ցավը մեղմելու է, խաղաղ երկինք և նոր օր է բացվելու, արհավիրքները հեռանալու են Հայաստան և Արցախ աշխարհներից: Փոշուց և ծխից մաքրվելու է հայ զինվորի հպարտ հայացքը, հայ մայրերը նորից են օրորոցայիններ երգելու, դեռ գալու են պայծառ արշալույսները և խաղաղ նիրհող մայրամուտները, համայն հայությունը միշտ է միասնական լինելու: Մեր տղաների բացակաները միայն ուսանողական մատյաններում են դրվելու, նրանց գնահատականները միշտ «գերազանցն» է լինելու, նրանց անունները միայն աշխարհի լավագույն հարթակներում են հնչելու, որովհետև նրանք անգին են: Աշխարհի բոլոր կողմերից հայերը կրկին միավորվելու են, բայց այն այլևս ուրախության միասնություն է լինելու:

Մերօրյա պատանին ուսանողական նստարանին երկար նստելու բախտ չունեցավ, քանի որ ամենամեծ սերը՝ հայրենիքը, իր գիրկը կանչեց:

Պատասխանատվության զգացումով և գիտակցված անձնազոհությամբ տղաները գնացին առաջնագիծ՝ հանուն սուրբ գաղափարի: Անասելի ցավ կա բոլորիս սրտում, ամեն զինվորի կորստյան հետ մեր մի մասնիկն ենք կորցնում, ամեն երկինք բարձրացող հոգու հետ մենք էլ ենք բարձրանում, զոհվածները հավերժ ապրում են մեր սրտերում:

Ի լուր աշխարհի՝ պետք է ապրենք և ապրեցնենք մեր կոտրված հոգիները:

Լիանա Խրշոյան
ոստիկանության լեյտենանտ

ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԸ ՄԱՐՏԻ ԴԱՇՏՈՒՄ

Պատերազմը գլխիվայր շրջում է աշխարհը, իսկ առօրյա կյանքը կարծրանում ու դառնում է կենացմահու խրամատ: Իրարից անկախ մարդիկ՝ տարբեր երազանքներով, նպատակներով, մասնագիտություններով ու բնավորությամբ, համախմբվում են՝ դառնալով մեկ բռունցք, ու դավանում են միայն մեկ արժեքի՝ պայքարել ու հաղթել հավատով՝ հանուն Արցախի ժողովրդի և համայն հայության խաղաղ ապագայի:

Սեպտեմբերի 27-ը հերթական կիրակիներից պետք է լիներ, երբ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի վճարովի ուսուցման սովորողները պատրաստվում էին հաջորդ շաբաթվա դասերին: Մեկ ակնթարթում, սակայն, լսած բոթը՝ պատերազմ է, Կրթակամալիրի երիտասարդ քաջարի սովորողներին ստիպում է գրքերի ու տետրերի փոխարեն վերցնել զենքն ու առանց վարանելու՝ մեկնել ռազմաճակատ:

Հայրենիքի սահմանները պաշտպանող ապագա իրավաբաններն արդարության կնիքը պետք է դրոշմեին ո՛չ թղթի վրա, այլ մարտի դաշտում:

Նրանք՝ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի անպարտելի ոգով քաջարի սովորող-մարտիկները, պատերազմի առաջին գծում հայրենիքի անձնուրաց նվիրյալներ դարձան, նրանցից ոմանք՝ նահատակներ: Նրանք Հայկ Նահապետի արժանի զավակներն են: Դեռ պատանի չդարձած՝ տղամարդ դարձան, ու առաջին կուրսեցիներն անգամ, դեռ ոտքը չդրած բուհի շեմին, առաջին ուսումնական տարվա բերկրանքը չվայելած, իրավաբան դառնալու երազանքն իրագործելու համար անվարան գնացին ծանր փորձության, չէ՞ որ նրանք այլևս երդվել են անմնացորդ նվիրվել հայրենիքին:

Ուսումը կիսատ թողնելը, ինչ խոսք, կազդեր նրանց մասնագիտական որակի վրա, սակայն, հոգ չէ. հայն առաջին հերթին զինվոր է, երբ վտանգի մեջ է հայրենիքը:

Հաղթանակի մեծ հավատով՝ արդարության այս մարտիկները գնացին մահվան աչքերին նայելու: Ցավո՜ք, նրանցից ոմանք զոհվեցին: Նրանց երակներում հոսում էր ապրելու, ստեղծագործելու և հաղթելու կամքը, ու ողջ մնացած երիտասարդներն իրենց ընկերների շիրիմին երդվեցին, որ ամեն գնով կպայքարեն նրանց չիրագործված երազանքներն իրագործելու համար:

Թանկագի՛ն նահատակվածներ, ձեր հարազատ կրթօջախը վառ կպահի ձեր հիշատակը:

Անի Ղուկասյան
ոստիկանության կապիտան

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Պարեկային ծառայությունում պաշտոնի նշանակվելու նպատակով ուսուցման ընդունելության գործընթացի ընթացիկ արդյունքների և դասընթացների վերաբերյալ
(թարմացված)

2020 թվականի դեկտեմբերի 5-ին ընդունող հանձնաժողովի 5-րդ նիստում ամփոփվել են ՀՀ ոստիկանության պարեկային ծառայությունում պաշտոնի նշանակվելու նպատակով ուսուցման ընդունելության արդյունքները, որից հետո մեկնարկել էր մրցույթով անցած 770 դիմորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը:

Հայաստանի Հանրապետությունում հայտարարված ռազմական դրության և COVID 19 համավարակի պատճառով ոչ բոլոր դիմորդներն էին պայմանագիր կնքելու հնարավորություն ունեցել:

Վերոգրյալով պայմանավորված՝ ընդունող հանձնաժողովի որոշմամբ պայմանագրերի կնքման գործընթացն ավարտվել է, և դասընթացները մեկնարկել են 2021 հունվարի 18-ին:

ՆՐԱՆՔ ԶՈՀՎԵՑԻՆ, ՈՐ ՄԵՆՔ ԱՊՐԵՆՔ

Պատերազմի մասին չեն պատմում. այն վերապրում են...

Պատմության յուրաքանչյուր հատված ունի դրսևորման իր ձևը: Հաճախ այն աչքի է ընկնում հերոսական դրվագների առատությամբ, իսկ հաճախ էլ բնութագրվում է որոշակի ձախողումներով:

Ղարաբաղյան պատերազմի օրագրի էջերն առավել հարուստ են դրսևորման առաջին՝ հերոսական, անմնացորդ նվիրումի, անհավատալի սխրանքների դրվագներով, որովհետև այն գրվել է ժամանակի հրամայականով և արդարության պահանջով:

1988 թվական, փետրվարի քսան: Տարեթիվ և օր, երբ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ներկայացուցչական մարմինը պատմական արդարությունը վերականգնելու որոշում կայացրեց: 1988-ի սկզբներին սկսված զանգվածային ցուցարարները կոչ էին անում Ադրբեջանի ԽՍՀ-ի կազմում անարդարացիորեն գտնվող Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը վերամիավորել Խորհրդային Հայաստանի հետ: Ժողովրդական այս շարժումն աշխարհի ուշադրության կենտրոնում էր. դրանով հայության զարթոնքի ու ինքնորոշման սկիզբը դրվեց:

Որոշման լուրը հասավ Երևան և տարածվեց սփյուռքի ամենատարբեր գաղթավայրերում, արթնացրեց ողջ հայությանը՝ փոխելով նրա հոգեկերտվածքը, փաստելով, որ Ղարաբաղյան շարժումը մեկ չափում ունի՝ անցյալից դեպի ապագա, դեպի ողջ Հայաստանի ապագա...

Հայ անհատը և ազգային հավաքականությունը համոզվեցին, որ միասնական ավյունով կարող են դուրս գալ պայքարի և այդ դեպքում կդիմագրավեն անգամ ամենաբիրտ ուժին՝ ամբողջատիրական վարչակազմին: Վերամիավորման պատմական պահանջը հայ ժողովրդին հետագա մաքառման ուժ հաղորդեց: Իսկ ժամանակն սպասում էր պահանջում...

Լիակատար շրջափակման մեջ հայտնված Հայաստանն ու Արցախը բռնեցին սեփական ուժերով վերամիավորման և բախտը սեփական ձեռքերով կռելու ուղին:

1991 թվականի սեպտեմբերի 2-ին հռչակվեց Արցախի անկախությունը:

Թեժացավ պատերազմը: Որսորդական հրացաններին փոխարինեցին գնդացիրներն ու տանկերը. հայությունը սխրանք գործեց:

1992 թվականի գարնանն արցախյան գոյամարտը թևակոխում էր նոր փուլ, և մայիսի 8-ին հայկական ստորաբաժանումները մտան ադրբեջանական զորախմբերից մաքրված պատմական Շուշի քաղաքը: Շուշիի ազատագրումն առաջին հերթին ազատամարտիկների անձնազոհության և սպայական կազմի խելամտության արգասիքն էր: Այս ռազմական գործողությամբ ապացուցվեց հայ ժողովրդի ռազմական մտքի կենսունակությունը:

Դեռևս 1988-ի փետրվարյան օրերին Թատերական հրապարակում ինքնապաշտպանական ջոկատներ կազմակերպելու կոչեր հնչեցին, և Ստեփանակերտում, ԼՂԻՄ-ի մի շարք բնակավայրերում ձևավորվեցին առաջին ընդհատակյա ինքնապաշտպանական ջոկատները, որոնք զինված էին որսորդական հրացաններով և ինքնաշեն զենքերով: Ինքնապաշտպանական մեծ թվով խմբեր և ջոկատներ կազմակերպվում էին նաև Հայաստանում: Հետագա ամբողջ ընթացքը ցույց տվեց, որ կամավորական ջոկատներն Արցախում և Հայաստանում փայլուն կատարեցին իրենց իսկ կողմից դրված խնդիրները:

Սա հաղթանակ էր, որի սկիզբը դրվեց 1988 թվականին:

Ակնհայտ էր, որ ստեղծված իրավիճակում ադրբեջանական կողմն այլևս չէր կարող իր քանակական ու ռազմատեխնիկական գերակշռությամբ ռազմաճակատում բեկում մտցնել: Հետևաբար, հասունացել էր զինադադարի հաստատման պահը:

2016թ. ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը 25-ամյա զինադադարից հետո Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի նախաձեռնությամբ Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի ռազմական հենակետերի և շփման գծի երկայնքով սկսվեցին լայնամասշտաբ ռազմական գործողություններ: Արցախյան կողմը հակահարվածներ հասցրեց ինչպես ադրբեջանական ռազմական հենակետերին, այնպես էլ շփման գծի երկայնքով: Առավել թեժ մարտեր են ընթացել ռազմաճակատի վերածված առաջնային գծի հարավային (Հադրութ) և հյուսիսարևելյան (Մարտակերտ) ուղղություններով:

2016 թվականի ապրիլի 2 -ից 5-ը ղարաբաղյան շփման գծում տեղի ունեցած իրադարձությունները պատմության մեջ մնացին որպես Քառօրյա պատերազմ: Թե՛ ռազմական գործողությունների ծավալով և թե՛ կիրառված զենքի ու զինտեխնիկայի հզորությամբ ու քանակով տեղի ունեցածն իրապես էլ պատերազմ էր: Փաստը կրկին արձանագրելու համար նշենք, որ ադրբեջանական կողմն այս պատերազմի մեջ մտավ՝ նախապես ունենալով մի շարք առավելություններ: 2016-ի Ապրիլյան պատերազմը ծանր փորձություն էր հայրենիքի սահմանները պահող զինվորների, նրանց ծնողների և ամբողջ հայության համար:

Դեռ չէր լռել ոսոխի թնդանոթը, հայոց երկնքում դեռ չէր ցնդել վառոդի հոտը, դեռ արցախյան հողը թաց էր մեր քաջորդիների արյամբ, երբ 2020 թվականի սեպտեմբերի 27-ին՝ առավոտյան ժամը 07:10-ին, լայնամասշտաբ պատերազմ սկսվեց արցախա-ադրբեջանական շփման գծի ողջ երկայնքով:

Այդ ծանր պահին 18-20 տարեկան հայ զինվորները, ռազմաճակատի առաջին գծում ծառայող հայ պատանիները, որոնք իրենց վրա ընդունեցին ադրբեջանական ագրեսիայի առաջին ալիքը, հավատարիմ հայկական ավանդությանը, մեծարելով տարիքավորներին, խրամատներում իրենց տեղը չզիջեցին իրենց օգնության եկած կամավոր երկրապահներին, որոնք, ըստ էության, նրանց պապիկները, հայրերը և ավագ եղբայրներն էին: Հայ զինվորների դրսևորած քաջությունը և հակահարվածն ապացուցում է, որ հայ պատանիները ոչ թե սովորական զինվորներ են, այլ կորյուններ, որոնց լույս աշխարհ են բերել առյուծածին հայ մայրերը, անվախ, քաջարի մարտիկներ, որոնց համար ամենաբարձր արժեքը ՀԱՅՐԵՆԻՔՆ է, հայրենի հողի, հայ ընտանիքի անվտանգության պաշտպանությունը:

Արցախյան պատերազմը մեր ժողովրդի խտացված կռիվն է պղծված պատմության և անարդարության դեմ: Եկել էր նախորդ դարերում ու տասնամյակներում չկրակված փամփուշտները կրակելու ժամանակը, այլևս պետք էր վառոդի օդ շնչել: Եվ Արցախը կանգնեց պարտադրված պատերազմի կրակոտ երախի առաջ ու չվարանեց՝ սեփական որդիների արյամբ կերտելով մի նոր պատմություն, տվեց հարյուրավոր հերոսներ, պատմության մի ամբողջ էջում անուն առ անուն գրվեցին հերոս տղաների կատարած սխրանքները՝ մինչև վերջին փամփուշտով արնաքամ վերքերով մարտնչելը: Պատերազմը հաղթանակով չպսակվեց, բայց մենք չպարտվեցինք, քանզի հայի ոգին անպարտելի է, և մի օր մենք կրկին կներկայանանք աշխարհին մեր հաղթանակներով:

Աննա Սարուխանյան
ոստիկանության կապիտան

ԱՐԺԱՆԱՑԵ՛Ք ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐԻՆ

«Ոստիկանության 100-ամյակ» հոբելյանական մեդալով ոստիկանության ծառայողը պարգևատրվում է ծառայողական պարտականությունները բարեխղճորեն, բարձր պատասխանատվությամբ կատարելու և բազմամյա ծառայության համար:

«Հայաստանի Հանրապետության ոստիկանության պատվավոր ծառայող» Հայաստանի Հանրապետության ոստիկանության պատվավոր ծառայող կրծքանշանը տրվում է ոստիկանությունում օրացուցային հաշվարկով ոչ պակաս, քան 25 տարի ծառայած և 20-ից ոչ պակաս խրախուսանք ունեցող ոստիկանության ծառայողին՝ ոստիկանության առջև դրված խնդիրների իրականացման, ոստիկանության կայացման, զարգացման, օրինականության ամրապնդման գործում զգալի ավանդ ներդնելու, ծառայողական պարտականությունները կամ հատուկ առաջադրանքները գերազանց կատարելու, ինչպես և երկարամյա ու անբասիր ծառայության համար:

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒՄ ԵՆՔ ՄԵՆՔ

ԳՈՐԻՍ

Ո՛վ չքնաղ Գորիս, սե՛գ, հպա՛րտ սարեր,
Մայր Հայաստանի բարձրաբե՛րձ լեռներ,
Կանգնած եք անհաղթ դարերով հնուց,
Ձեր ծոցում եք դուք փայփայել Բակունց:

Ձորերդ խորն են, մթին, ահռելի,
Վերքեր են տեսել, ցավ անբուժելի,
Հայ ժողովրդի քարքարո՛տ մատյան,
Աշխարհ ես բերել դու Աշոտ Սաթյան:

Որոտանն է քո դաշտերը ջրել,
Սարերից վազել ու քո գովքն արել,
Երգը չի լռել երբեք մի վայրկյան,
Դու պատմությունն ես, Սերո՛ Խանզադյան:

Ձրերդ անուշ զուլալ վարարել,
Ժայռի պռնկից կաթ առ կաթ թափվել,
Արարել կյանքի սիրո ավազան,
Քեզ հետ է ապրել Սուրենն Այվազյան:

Մարդիկ են ապրել մթին ժայռերում,
Վարուցանք արել քարքարոտ հողում,
Քեզ հետ են նրանք միշտ ու առհավետ,
Հերոսի մահով ընկար, Սպարապե՛տ:

Ու քարից մարդիկ դեղ են պատրաստել,
Փշերից անգամ հյութեր են քամել,
Դեղն այդ բուժել է շատ ու շատ վերքեր.
Չէ՞ որ դու ունես բժիշկ Յոլյաններ:

Սոխակի նման ջուրն է կարկաչել,
Լուսաբացն անուշ ծաղկով է բացվել,
Գարունն էլ ասես ժպիտ է թախծոտ,
Քո երգն է ծորում, մե՛ծ Գուսան Աշոտ:

Կարինե Կիրակոսյան
ոստիկանության գնդապետ

ԽՈՐՀՈՒՄ ԵՆ ՄԵԾԵՐԸ

Հայրենիքը սիրում են ոչ թե նրա համար, որ մեծ է, այլ նրա համար, որ քոնն է:

Սենեկա կրտսեր

***

Մեր հայրենիքում մեզ սպանեցին, բայց հայրենիքը մեր մեջ չսպանվեց:

Պարույր Սևակ

***

Հայրենիքից զատ, Հայրենիքից դուրս ինձ համար խաբուսիկ են բոլոր դրախտները:

Գարեգին Նժդեհ

***

Կարևոր է, որ դու պատրաստ լինես մեռնել հանուն քո հայրենիքի, բայց ավելի կարևոր է, որ դու պատրաստ լինես ապրել հանուն նրա:

Թեոդոր Ռուզվելտ

***

Առևտրականի համար հայրենիքը իր գրպանն է:

Շենշոլ

***

Սերը դեպի հայրենիքը քաղաքակիրթ մարդու առաջին արժանիքն է:

Նապոլեոն Բոնապարտ

***

Հայրենիքին դավաճանելու համար հարկավոր է հոգու արտակարգ ստորություն:

Չերնիշևսկի

***

Բռնությամբ նվաճած հաղթանակը հավասարազոր է պարտության և ժամանակավոր է...

Ահաթմա Գանդի

***

Այս կյանքում երկու բան՝ սեր և մահ, երբեք մի փնտրեք, դրանք իրենք ձեզ կգտնեն, երբ ժամանակը գա...

Ալ կապոնե

***

Չկա ավելի մեծ դժբախտություն, քան հակառակորդին թերագնահատելը:

Լաո Ցզի

***

Արիությունը ծնում է հաղթողներ, համերաշխությունը՝ անպարտելիներ:

Դելավին

***

Հաջողությունը վերջնական չէ, պարտությունը ճակատագրական չէ, քաջություն ունենալ շարունակելու՝ ահա թե ինչն է կարևոր:

Ուինստոն Չերչիլ

ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ

Լրատվական գործունեություն իրականացնող ՀՀ ոստիկանության կրթահամալիր ՊՈԱԿ, հասցե՝ ք. Երևան, Ծովակալ Իսակովի փողոց, 29, հեռախոս՝ 010 77 08 73:
Գրանցման վկայական՝ 29021003884:

Տպագրվել է «Տիգրան Մեծ» ՓԲԸ-ում՝ Արշակունյաց 2:
Ծավալը՝ 1 մամուլ: Տպաքանակը՝ 300 օրինակ:
Ստորագրված է տպագրության 29. 01. 2021թ.:
Համակարգչային շարվածքը՝ «Պատիվ ունեմ» ամսաթերթի:
Գլխավոր խմբագիր՝ Ռ. Մուսայելյան:
Պատասխանատու քարտուղար՝ Արուսյակ Քոչարյան: